ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1920-1922թթ)

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ-իտալական առևտրատնտեսական հարաբերությունները շատ քիչ են ուսումնասիրվել[1], թեև ըստ մեզ դրանք մեծ հետաքրքրություն են ներկայացնում:Մասամբ այդ հարաբերությունների շնորհիվ էր, որ երիտասարդ Խորհրդային Հայաստանը կարողացավ փոքրիշատե մեղմել հանրապետությունում ահագնացող սովն ու համաճարակը:Հայաստանում գործող իտալական ընկերությունները, ի տարբերություն եվրոպական նմանատիպ այլ կազմակերպությունների, համաձայնվել էին Հայաստանի հետ առևտրի հիմքում դնել նաև ապրանքափոխանակության սկզբունքը: Բնական հարստություններից զուրկ Խորհրդային Հայաստանին դա հնարավորություն ընծեռեց երկիրը առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար:Իսկ Իտալիայի համար Հայաստանի հետ առևտուրը հիանալի հնարավորություն էր իր համեմատաբար ցածրորակ ապրանքները հայկական շուկայում իրացնելու համար:Հայաստանը Իտալիայի համար հանդիսանում էր նաև հումքի աղբյուր, քանի որ իտալական ապրանքների դիմաց Խորհրդային Հայաստանը տալիս էր Ադրբեջանից որպես օգնություն ստացվող նավթը և ՌԽՖՍՀ-ից որպես օգնություն ուղարկվող մանուֆակտուրան:

Խորհրդային Հայաստանի կառավարության և Հայաստանում Իտալիայի ներկայացուցչության միջև առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման և ապրանքափոխանակություն իրականացնելու վերաբերյալ բանակցությունները սկսվում են 1920թ. վերջին: Խորհրդային Հայաստանում Իտալիայի ներկայացուցիչ Գորրինին ՀԽՍՀ իշխանություններին կոնցեսիաների[2] հետ կապված համագործակցության առաջարկ է ներկայացնում, ինչը Հայաստանի կառավարության կողմից դրական վերաբերմունքի է արժանանում: Շուտով իտալացիները խոսքից գործի են անցնում և ՀԽՍՀ իշխանու-

---

[1] Հայ-իտալական առևտրատնտեսական առնչությունների վերաբերյալ անդրադարձ է կատարել է.Ա.Զոհրաբյանն «Եվրոպական երկրների հետ Սովետական Հայաստանի առևտրատնտեսական առնչությունների պատմությունից(1920-1922թթ.)» հոդվածում, տես «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր(1920-1922թթ.)» ժողովածույ, Ե., 1987:

[2] Կոնցեսիա հայերեն թարգմանաբար նշանակում է հավատարմագրում:

թյուններին առաջինը համագործակցության առաջարկ է անում «ՍԱԳՈ» ընկերության ներկայացուցիչը:

Իտալացիները Հայաստանում «ՍԱԳՈ»-ի գործունեությանը փորձում էին տալ մարդասիրական ուղղվածություն, նշելով, որ իրենց հիմնական նպատակն է օգնել հայ ժողովրդին: Իրականում «ՍԱԳՈ»-ի հիմնական նպատակը դեռևս Հայաստանի առաջին հանրապետության տարիներին երկրում մնացած իր պահեստներից ապրանքներ արտահանելու և ներմուծելու թույլտվություն ստանալն էր:

1921թ. հունվարի 18-ին Հայաստանում Իտալիայի ներկայացուցիչ Գորրինին Թիֆլիսից հեռագիր է ուղարկում Խորհրդային Հայաստանի կառավարությանը այն մասին, որ Լուչիանո Կաֆֆին հանդիսանում է Հայաստանում Իտալիայի ժամանակավոր առևտրական ներկայացուցիչը և նրան հանձնարարվում է մեկնել Երևան և ՀԽՍՀ կառավարության հետ կարգավորել «ՍԱԳՈ» ընկերությանը պատկանող պահեստների, վագոնների և ապրանքների հարցը:

1921թ. փետրվարի 1-ին Խորհրդային Հայաստանի իշխանությունները ընդունում են Կաֆֆիին և մանրամասն զրուցում երկկողմ առևտրատնտեսական կապերի զարգացման մասին:Փետրվարի 2-ին Կաֆֆին ՀԽՍՀ իշխանություններին է ներկայացնում իր խնդրանքը, որը բաղկացած էր հետևյալ 4 կետերից.

«1. Քանի որ Չեզ և ինձ հետաքրքրող հարցերի բարենպաստ լուծումը մեծա-պես կախված է Թիֆլիսում իտալական քաղաքական գործակալության միջոցով Ի-տալիայի հետ կապվելու հնարավորությունից, ապա ցանկալի կլինի, որ ամեն ան-գամ ինձ ժամանակին տեղեկացնեն Թիֆլիս մեկնող ձեր սուրհանդակների մասին, որպեսզի ես կարողանամ ուղարկել իմ փոստը նրանց հետ:

2. Խնդրում եմ ամեն օր ինձ ուղարկել ռուսերեն լեզվով լույս տեսնող տեղա-կան կոմունիստական լրագրի մեկ համար:

3. Խնդրում եմ ինձ և քաղաքացի Մարիո Պարմիջանիին[3] թույլատրել երթևեկելու Երևանում ժամը 21 1/2-ից հետո:

4. Խնդրում եմ սույնի հետ ներկայացվող հեռագրերը ուղարկել հասցեա-տերերին»:[4]

Փետրվարի 5-ին Կաֆֆին կրկին դիմում է Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմատ, որտեղ նշում է, որ «եթե Հայաստանը մնացյալ աշխարհից կտրված մնա ևս մի քանի ամիս,ապա նրան կսպասեն շատ ծանր փորձություններ:Մինչդեռ աստիճանաբար կարգավորվող հարաբերությունները

[3] Մարիո Պարմիջանին իտալական ներկայացուցչության քարտուղարն էր:
[4] Է.Ա.Զոհրաբյան նշվ. աշխ., էջ 138:

ՌՍՖՍՀ-ի և Իտալիայի հետ կարող են ոչ միայն Հայաստանը դուրս բերել ներկա ծգնաժամից, այլև նրա ժողովրդին մոտ ապագայում բավարար բարօրություն կտան»:[5] Կաֆֆին կողմ էր եվրոպական երկրների և Խորհրդային հանրապետությունների միջև առևտրատնտեսական կապերի ձևավորմանը, և բազմիցս գրում էր, որ դա առավել ճիշտ ուղի է անցման շրջանում գտնվող երկրները տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար:Նա հաստատակամ էր և վճռական, քանզի գտնում էր, որ իր կողմից արծարծված հարցերի լուծումը կտա ցանկալի արդյունք:[6]

Անդրադառնալով Խորհրդային Հայաստանի տնտեսական ծանր վիճակին, Կաֆֆին դրա վերաբերյալ իր մոտեցումներն էր հայտնում:Նա Հայաստանի տնտեսական ծանր վիճակը տեսնում էր տրանսպորտային միջոցների ոչ լիարժեք շահագործման մեջ, որի պատճառը երկրում տիրող ռազմաքաղաքական ծանր վիճակն էր:Կաֆֆին գտնում էր, որ եթե Խորհրդային Հայաստանում կարգավորվեր «ՍՍԳՌ» ընկերությանը պատկանող ապրանքների արտահանման խնդիրը, ապա կոնցեսիաների հարցը կլուծվեր ինքնաբերաբար: Հայաստանում Իտալիայի ժամանակավոր առևտրական ներկայացուցիչը նորաստեղծ Խորհրդային հանրապետությանը անհրաժեշտ ապրանքներ մատակարարելու դիմաց առաջ էր քաշում որոշ պայմաններ:Այդ պայմաններն էին.

1.ՀԽՍՀ իշխանությունները պետք է վերահաստատեին նախկին իշխանությունների օրոք Հայաստանում գործած իտալական ընկերությունների իրենց պատկանող ապրանքներն ազատ տնօրինելու իրավունքը:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանում տրանսպորտը պետականացված էր, առաջին պահանջի կատարման դեպքում Հայաստանի իշխանությունները այդ ապրանքների փոխադրման համար պետք է տրամադրեին տրանսպորտային միջոցներ:

3. Կաֆֆիի պնդմամբ Հայաստանի իշխանությունների կողմից մանրածախ առևտրի բացառման դեպքում իտալացիները առևտուր էին անելու միայն երկրի կառավարության հետ:

4. Պետք է Հայաստանի տարբեր վայրերում ստեղծվեին պահեստներ, որոնց պետք է տրվեր «դիվանագիտական ստատուս»՝դրանից բխող բոլոր իրավունքներով և արտոնություններով:[7]

1921թ. Փետրվարյան ապստամբության պատճառով հայ-իտալական բանակցություններն ընդհատվում են մինչև ապրիլ:Այս ապստամբության հետևանքով երկրում տնտեսական դրությունը ավելի է ծանրանում:Ապրիլի

---

[5] ՀՀ ՀԱԱ ֆ.114, ց.2, գ.67, թ.78:
[6] Է.Ա.Զոհրաբյան նշվ. աշխ., էջ 165:
[7] Նույն տեղում, էջ 140:

վերջերին Թիֆլիսից Երևան է ժամանում Հայաստանում Իտալիայի լիազոր ներկայացուցիչ կոմանդոր Գորրինին և մի շարք հանդիպումներ է ունենում ՀԽՍՀ իշխանությունների հետ՝քննարկելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող առևտրատնտեսական բնույթի հարցեր: Գորրինիի Երևան ժամանելուց հետո հայ-իտալական երկկողմ բանակցությունները ակտիվանում են:Այդ բանակցությունների արդյունքում ՀԽՍՀ կառավարությունը պատրաստակամություն է հայտնում կոնցեսիոն կարգով իտալացիներին հանձնել Զանգեզուրում և Փամբակում պղնձի հանքերի շահագործման, Երևանում ռադիոկայանի կառուցման, Սարդարապատի տափաստանի ոռոգման և այլ օբյեկտների շահագործման իրավունքը:Սրա դիմաց իտալացիները պարտավորվում էին նշված տեղամասերը ապահովել երկաթգծով: Հայաստանի իշխանությունների կարծիքով դեպի այդ վայրեր երկաթգծի անցկացումը կաշխուժացներ այդ շրջանների տնտեսական կյանքը, ինչը չէր կարող իր բարերար ազդեցությունը չունենալ ողջ երկրի տնտեսական կյանքի բարելավման վրա: Սա երկկողմ բանակցությունների ժամանակ Խորհրդային Հայաստանի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումն էր:

Մայիսի 1-ին Գորրինին ՀԽՍՀ կառավարությանն է ներկայացնում այն օբյեկտների ցուցակը, որոնք իտալացիները ցանկանում էին կոնցեսիան կարգով կառավարել:Այդ ցուցակը բաղկացած էր 12 կետից և ուներ հետևյալ պատկերը.

1.Իտալո-հայկական ընկերության կոնցեսիա Երևանում հզոր ռադիոկայան կառուցելու համար, որն անմիջական կապ կունենա աշխարհի բոլոր ռադիոկայանների, ինչպես նաև Հայաստանի գլխավոր կենտրոնների հետ:

2.Կոնցեսիա Ալյաթ-Զանգեզուր-Նախիջևան-Ջուլֆա երաթգծի կառուցման և Զանգեզուրի հանքավայրերի շահագործման համար:

3.Ագրարային կոնցեսիա Սարդարապատի տափաստանում:

4.Ղարաքիլիսայում ապակու գործարանի կառուցման կոնցեսիա:

5.Ծծմբաթթվի գործարանի կառուցման և ծծմբաքարի հանքավայրի շահագործման կոնցեսիա:

6.Մրգի և ձկան պահածոների գործարանի կառուցման կոնցեսիա:

7.Երկաթգծի շարժական կազմի, կամուրջների և գծերի վերանորոգման կոնցեսիա: Նոր շոգեքարշերի ու վագոնների մատակարարում:

8.Նույնը ավտոմոբիլային և կենդանաքարշ ճանապարհների համար: Բեռնատար ու մարդատար ավտոմոբիլների մատակարարում:

9.Գյուղատնտեսական և ագրարային մեքենաների ու սարքերի մատակարարում:

10.Ցեմենտի հանքավայրի մշակման ու ֆաբրիկայի կառուցման կոնցեսիա:

11.Գետերի ու լճերի էլեկտրաֆիկացման կոնցեսիա:

12.Փոստային,մարդատար և առևտրական հաղորդակցության համար օդանավերի մատակարարում:[8]

Գորրինին նաև նշում էր, որ կոնցեսիաներ տրամադրելու ժամանակ իտալական խմբին պետք է տրվեր բացառիկ շահագործման իրավունք:[9]

Այս 12 կետերը իրենց մեջ ներառում էին ՀԽՍՀ տնտեսության ճյուղերի մեծ մասը:Քանի-որ իտալացիները մեծ ակնկալիքներ ունեին և կոնցեսիաների մարման ժամկետը նրանց կողմից սահմանվում էր 36-40 տարի, բնականաբար Խորհրդային Հայաստանի ամբողջ տնտեսությունը գտնվելու էր նրանց ձեռքում:Ցուցակի հետ միասին Գորրինին ներկայացրեց մի գրություն, որտեղ նշում էր, որ իտալացի մասնագետների Հայաստան ժամանելուց հետո հնարավոր էր ձեռք բերվեին նաև տնտեսության այլ ճյուղերին վերաբերվող կոնցեսիաներ:[10]

Մայիսի 7-ին Հայաստանի կառավարությունը պատասխան գրություն հղեց Գորրինիին, որտեղ սկզբունքորեն տալիս էր իր համաձայնությունը, բայց պայմանով, որ վերջնական պայմանագիրը կստորագրվի միայն գործին քաջատեղյակ մասնագետների մասնակցությամբ:

1921թ. հունիսին ՀԽՍՀ արտգործժողկոմ Ասքանազ Սռավյանը, հարցազրույց տալով Թիֆլիսի «Կարմիր Աստղ» թերթին, նշում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը որոշել է վերսկսել իր հարաբերությունները եվրոպական երկրների հետ: Ըստ նրա Իտալիայի, Գերմանիայի և Չեխոսլովակիայի ներկայացուցիչները դիմել են ՀԽՍՀ իշխանություններին և ցանկություն հայտնել սկսելու առևտրատնտեսական հարաբերություններ:Սռավյանի խոսքերով նշված երկրները հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանում կոնցեսիաներ ձեռք բերելու համար:[11]

Խորհրդային Հայաստանի կառավարության և Գորրինիի միջև ստորագրված պայմանագրի նախագիծը կազմված էր 17 հոդվածներից:Դրանցից իրենց կարևորությամբ առանձնանում էին հետևյալները.

---

[8] ՀՀ ՀԱԱ ֆ.114, ց.2, գ.67, թ.106
[9] Է.Ա.Զոհրաբյան նշվ. աշխ., էջ 168
[10] ՀՀ ՀԱԱ ֆ.114, ց.2, գ.67, թ.99
[11] Է.Ա.Զոհրաբյան նշվ. աշխ., էջ 171

1. Հայաստանի կողմից իտալացիներին տրամադրված կոնցեսիաները կտնօրինվեն իտալական արդյունաբերության միևնույն կազմակերպության կողմից, միասնական վարչությամբ և այլն:

2. Տասներկու ենթահողվածներով թվարկված էին կոնցեսիաները, որոնք ամբողջությամբ համընկնում էին մայիսի 1-ին ներկայացված ցուցակի հետ: Իտալական կոնցեսիոներների սինդիկատը իրավունք ուներ այլ կոնցեսիաներ ստանալու, որոնք սինդիկատը օգտակար և անհրաժեշտ կհամարեր հայկական ինդուստրիայի լավագույն կազմակերպման համար:

3. Սինդիկատը կարող էր հրաժարվել առաջարկված կոնցեսիաներից բացառությամբ Ալյաթ-Ջուլֆա երկաթգծից(մինչև Սև ծով շարունակելու իրավունքով), Զանգեզուրի հանքավայրերից, ապակու և կերամիկայի գործարաններից: Կոնցեսիաների ժամկետը սահմանվում էր 36 տարի:

4. Սինդիկատը իրավունք պետք է ունենա անվճար օգտագործել հանրապետության շինարարական նյութերը՝ անտառանյութը, ցեմենտը, քարը և այլն: Սինդիկատն էր նաև որոշում և ընտրում հիդրոկայանների կառուցման տեղը:

5. Հատուցման հետ կապված սինդիկատը վճարումը կատարելու էր հետևյալ կերպ.առաջին 4 տարիներին արտադրանքի 5 %-ի,հաջորդ 12 տարիներին՝ 10%-ի, իսկ մնացած 20 տարիներին՝15 %-ի չափով:

6. Արտադրանքի հատուցումից մնացած մասը իտալացիները կարող էին Վրաստանի և Ադրբեջանի վրայով արտահանել՝առանց մաքսերի ու հատուկ հարկերի վճարման:Ընդ որում այդ տրանզիտի իրավունքը Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններից պետք է ստանար Հայաստանի կառավարությունը:

7. Սինդիկատը նաև իրավունք էր ստանում իր արտադրանքը ազատորեն արտահանել Թուրքիա, Իրան և այլ երկրներ՝վաճառքի կամ ապրանքափոխանակության համար: Ապրանքափոխանակությամբ ձեռք բերված ապրանքները նմանապես սինդիկատը կարող էր տնօրինել 7-րդ հոդվածի համաձայն:

10. Իսկ եթե կառավարությունը հատուցման հետ կապված սինդիկատի վճարումից ավելին ցանկանա, ապա փոխարենը պետք է վճարի,այն էլ վալյուտայով:

11. Համաձայնագրի նախագծի երկաթուղային կոնցեսիային վերաբերող մասում ասված էր,որ 36 տարիների ընթացքում Հայաստանի տարածքում երկաթուղիների կառուցման բացառիկ իրավունքը պետք է պատկանի իտալացիներին: Նրանք իրավունք էին ստանում ապրանքների արտահանության և երթևեկության նպատակով Հայաստանի երկաթգծերի,ինչպես նաև Բաքու-Բա-

թում և Զուլֆա-Երևան-Թիֆլիս-Բաթում գծերի վրա ունենալ շարժական կազմ, որի ծախսերի միայն կեսն են իրենք հոգում (մյուս կեսը պետք է հոգար համապատասխան երկաթգծի վարչությունը) և այլն:

17. Եթե 36 տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը տնտեսության այլ հատվածում կոնցեսիա տրամադրելու ցանկություն ունենար, ապա նա պարտավոր էր այդ մասին տեղյակ պահել իտալացիներին և նախապատվությունը տալ նրանց:[12]

Այս պայմանագիրը շահավետության տեսանկյունից ավելի ձեռնտու էր իտալացիներին, քան թե հայ ժողովրդին, ուստի ՀԽՍՀ կառավարությունը մերժում է այն:Մերժման հարցի քննարկումը կայացավ մայիսին՝Ալեքսանդր Մյասնիկյանի Հայաստան գալուց հետո հրավիրված կառավարության նիստում, որի արդյունքում ընդունվեց դեկլարացիա և այն ուղարկվեց Լուչիանո Կաֆֆիին:[13]

Իտալացիները Հայաստանում իրենց առաքելությունը ավարտված համարելով այլևս չհետաքրքրվեցին կոնցեսիաներով:Իսկ առաքելությունը մեր կարծիքով կայանում էր նրանում, որ Հայաստանի տարածքից դուրս բերվեն դեռևս Հայաստանի Առաջին հանրապետության ժամանակաշրջանից այնտեղ մնացած իտալացիներին պատկանող ունեցվածքը:

Արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ «ՍԱԳՈ» ընկերությունից բացի կար ևս մի իտալական ընկերություն, որը հետաքրքրված էր Հայաստանում կոնցեսիա ձեռք բերելու հարցում:Դա իտալական «Բիելլեզե» բանկն էր:

1922թ. հունիսի 21-ին այդ բանկի ներկայացուցիչները նամակ են ուղարկում Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որտեղ նշում են, որ իրենց բանկը ցանկանում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանը շահագործել կոնցեսիոն հիմունքներով:

Հայկական կողմը հուլիսի 26-ին պատասխան նամակ է ուղարկում բանկի ներկայացուցիչ՝ինժեներ Կիարավիլիոյին, որտեղ նշում է, որ իտալացիների կողմից առաջարկված աշխատանքային նախագիծը լիովին ընդունվում է Հայաստանի իշխանությունների կողմից: Իտալացիները ցանկություն էին հայտնել նաև վերցնել երկաթուղային կոնցեսիա՝ավարտին հասցնելու Ալյաթ-Զուլֆա երկաթգծի կառուցումը: Հայկական կողմը իտալացիներին առաջարկում է միացնել երկու կոնցեսիաները և վերցնել միացյալ կոնցեսիա: Նշվում էր նաև, որ մինչև ինժեների Անդրկովկաս վերադառնալը, Անդրկովկասի Դաշնային

---

[12] է.Ա.Զոհրաբյան նշվ. աշխ., էջ 172-174
[13] ՀՀ ՀԱԱ ֆ.114, ց.2, գ.67, թ.116

խորհուրդը, մանրամասն ուսումնասիրությունից հետո կտա իր համաձայնությունը:[14]

Հայ-իտալական այս գործարքի ճակատագիրը անհայտ մնաց, քանի որ այս գործարքի վերաբերյալ այլ փաստաթուղթ ՀՀ ՀԱ արխիվում դեռևս չի հայտնաբերվել:

Ամփոփելով թեման, պետք է նշել, որ այնուամենայնիվ երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները չհանգեցրին ցանկալի արդյունքի: Դրա հիմնական պատճառն այն էր, որ և՛ առևտրի վերաբերյալ, և՛ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության այս կամ այն ճյուղի հավատարմագրային կառավարման վերաբերյալ բանակցություններում իտալական կողմը երբեմն այնպիսի պահանջներ էր ներկայացնում, որոնց իրագործումը հակասում էր ՀԽՍՀ պետական շահերին: Այդ իսկ պատճառով 1921թ. հունիս-հուլիս ամիսներին երկկողմ բանակցություններն ընդհատվում են: Ընդհատման մյուս պատճառը 1921թ. հունիսի 2-ին Բաքվում անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների կողմից արտաքին առևտրի միավորման մասին պայմանագրի կնքումն էր, համաձայն որի ստեղծվում էր արտաքին առևտրի միասնական մարմին և 3 հանրապետությունները առանձին-առանձին իրավունք չունեին առևտրի վերաբերյալ բանակցություններ վարել և պայմանագրեր կնքել այլ երկրների հետ:

[14] ՀՀ ՀԱԱ Ֆ.115, ց.1, գ.87, թ.8